


տանը: Նա դրանով հասարակութեան մէջ իւր ունեցած վարկին երբէք այնքան վնաս չի տալ, որքան Անգլիայում՝ անգլիական հոգևորականութեան անդամը՝ Նոյն բանն անելիս:

(Նառուհակելի)



ՎԼ. ՍՈՒՆՈՒԹԵՐԸ ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՎԼ. Սոլովևը ռուս մտաւորական կեանքի ամենափայլուն երրկոյթներէից մէկն է: Լինելով բազմակողմակողմանի ընդունակութիւնների տէր՝ իմաստասիրական, քննադատական, բանաստեղծական, նա ստեղծեց մի ըստ ամենայնի ամբողջական աշխարհայեացք փիլիսոփայութեան մէջ: Թէ կողմնակիցներն ու համակրողները և թէ հակառակորդներն ու հակակրողները խոստովանում են միաբերան, որ նա անսովոր բարոյական և մտաւոր ուժերի տէր անձնաւորութիւն էր¹⁾: Նոյն իսկ ոմանք նրա ստեղծած համակարգը համարում են տիեզերական մաքի վերջին խօսքը²⁾:

Իւր գործունէութեան առաջին օրերից սկսած մինչև վերջինը նա պաշտպանում էր կեանքի և փիլիսոփայութեան սերտ կապի սկզբունքը և գործով էլ աշխատում էր իւր համոզմունքն արդարացնել: Յաճախ թողել է նա իմաստասիրող մաքի բարձր ոլորտները պաշտպանելու համար հրէաներին, ռուս ժողովրդի իսկական շահերը կամ արդարութեան վեհ սկզբունքը: Ահա այս բնաւորութիւնն ունեցող մի շարք գրութիւնների հետ մենք ցանկանում

1) Տե՛ս Вопросы философии и психологии թերթը 1901 թ. № 1 (56) էջ 36, 45, 93—4 և այլն:

2) Տե՛ս Проблемы идеализма ժողովածուն, էջ 44.

ենք ծանօթացնել հայ ընթերցողին: Մեր ուշադրութիւնը գրաւող յօդւածները ամփոփած են նրա շարադրութիւնների հինգերորդ հատորում¹⁾:

I.

«Կուլտուրայի հարցերից» ընդհանուր վերնագրով երկու յօդւած կայ Սուլովեի շարադրութիւնների հինգերորդ հատորում, որոնցից առաջինը՝ «Էւ. Ֆ. Սամարինը բարոնուհի է. Ռադէնին գրած նամակում» խորագրով, բովանդակում է մի երկարատեւ և ըստ ամենայնի կենսաթրթիւ վէճի սկիզբն ու աւիթը:

Խօսելով այն մեծ տարբերութեան մասին, որ նկատուում է ազանդաւոր և ուղղափառ ռուս գիւղացիների տնտեսական վիճակների միջև, Սուլովեը հարց է տալիս, թէ ինչն է պատճառը, որ ազանդաւոր ու հերձաւոր ռուսներն աւելի բարեկեցիկ են, քան ուղղափառ գիւղացիները և այդ երեւոյթի պատճառը համարում է այն, որ առաջինները պարտաւոր են իրանց հալածանքներից պաշտպանելու: Զպէտք է կարծել սակայն, որ հալածանքն ինքն ըստ ինքեան մի ցանկալի և օգտակար բան է: Հալածանքի բերած օգուտը ոչ թէ նրա պատճառած տառապանքներն են, այլ այն «անհրաժեշտութիւնը, որ ստիպում է նրանց սեփական ներքին ուժերով պաշտպանելու, իրանց խելքով ու բարոյական սխրանքով ապրելու»: «Օգտակար են ոչ թէ հալածանքները, այլ ինքնապաշտպանութիւնը, ոչ թէ արտաքին նեղութիւնները, այլ ստիպողական պաշտպանումից ներքնապէս ազատ լինելը. այն պաշտպանումից, որ սեղմում և անզգայացնում է հոգեկան ուժերը»:

1) Այդ յօդւածներն են «Կուլտուրայի հարցերից» (Երկու յօդւած), գրւած 1893 թ. հատ. V, 439—457: «Ասրֆերի Գուլովեը հաւատի և ազատութեան մասին», «և մի վէճ արդարութեան մասին» և «վէճի վերջը», որ գրւել են 1894 թ. պաշտպանելու համար առաջին յօդւածում յայտնած մտքերը և բռնում են նոյն հատորի 463—512 էջերը:

Բայց այդ օգուտը (այսինքն՝ իրանց խելքով ապրելը, ինքնապաշտպանութիւնը) ամենից աւելի արդարացի և ապահով կարելի է ձեռք բերել կրօնական ներսողամտութեան ժամանակ, երբ իւրաքանչիւր դաւանութիւն ստիպւած է ազատ մրցումով իրան պահպանելու միւս բոլորի դէմ: Անկասկած, ճշմարտութեան համար ամենից շահաւէտը այս տեսակ դրութիւնն է, մինչդեռ երբ ճշմարտութեան տիրապետութիւնը ստիպողական է, այն ժամանակ հալածւող մոլորութիւնները ստանում են ոգեկան անկախութեան ու ինքնագործութեան բոլոր առաւելութիւնները»¹⁾ (Մ. 440):

Այս Սոլովիւք մատնացոյց է անում այն մարդկանց վրայ, որոնք «եկեղեցի» են ասում և կարծում են թէ դա անդորրութեան ու հանգստի մի փափուկ բարձ է, որովհետև նրանց համար թանկ է ոչ թէ եկեղեցու ներքին ճշմարտութիւնն ու նրա առաջադրած բարոյական պահանջները, այլ նրա արտաքին գոյութիւնը միայն: Այս մարդկանց ձգտումը՝ ամեն ինչ արտաքինով վերջադած համարել, նա անւանում է «իսլամի մի վատ խելապատկեր» (սլաուոգիա) և միանգամայն հերքում է, որ այդ լինէր ռուս ժողովուրդի կրօնական իդէալը:

«Այդ ժողովուրդն, ասում է նա, անկասկած միայն կրօնական ենթարկման չէ ընդունակ, այլ և կրօնական կեանքի: Մինչև այսօր այդ կեանքն երևացել է մոլորութեան մէջ (այսինքն՝ հերձաւածոյներն ու աղանդաւորներն են միայն կրօնապէս ապրել), շատ աւելի ցանկալի է, որ այդ կեանքն երևայ ճշմարտութեան մէջ: Կեանքը կռիւ է. սա մի ճշմարտութիւն է, երբ ճշմարտութիւնը տիրող է նա կռուելու, «ուրեմն և ապրելու» առիթ չունի: Մինչդեռ կրօնական դաւանումների բնագաւառը կեանքի ամենախոր ու հիմնական ոլորտն է. և եթէ նա արդէն անզգայացել է, եթէ այստեղ, այս ոգեկան կենդրոնում

1) Չակերտածը Սոլովիւքի խօսքերն. մնացած մասերը համառոտում ենք. փակագծում եղած խօսքերը մերն են:

մարդկային ուժերը զրկուած են առողջ ինքնագործութեան և ինքնազարգացման անհրաժեշտ պայմաններից— ապա նրանք անկարող են զարգանալու և ներգործելու նա և միւս ոլորտներում» (Մ. 441):

Մտխոյզապէս—ապահոված անշարժութիւնն ու միօրինակութիւնը կրօնի աշխարհում՝ ճնշելով մարդկանց ներքին ոգեկան եռանդը, խլելով նրանցից մտաւոր ձեռնէրէցութիւնը ամենակարեւոր գործում (այսինքն՝ կրօնի բնագաւառում) և պահելով նրանց կրաւոր, հօտային վիճակում, — անխուսափօրէն արտացոլում են նաև արտաքին կեանքում և հասցնում կուլտուրայի դադարման և տնտեսական անօգնութեան» (Մ. 441): Սրան օրինակ կարող են լինել Հնդկաստանն ու Բիւզանդիոնը, Միւսուլման աշխարհը ներկայումս և Պիրինեան թերակղզին ու Հարաւային Ամերիկան մեզանից քիչ առաջ:

Անպայման ենթարկւելու սկզբունքը իրաւացի կը լինէր միայն այն ժամանակ, երբ ճշմարտութիւնը մեկին և անվիճելի լինէր: Բայց «ուղղափառ դաւանութիւնը ամենեւին չի ամփոփում իր մէջ այն արտաքին անվիճելի և այսպէս ասած՝ շօշափելի որոշութիւնը», որը միայն կարող է արգարացնել «արտաքին ենթարկման սկզբունքը», որովհետեւ՝ միայն ան այն ժամանակ, երբ ճշմարտութիւնը յայտնի է, կարելի է մարդկանցից անպայման ենթարկւելու պահանջ անել (Մ. 441): Ի նկատի առնելով այս հանգամանքը, չի կարելի «արտաքին ստխոյզական ենթարկման ճանապարհը», որ ազգերին դէպի «մահ և անկում է տանում», բնական համարել ուղղափառ ռուս ժողովուրդի համար:

Սրանից յետոյ Սոլովևը մէջ է բերում և երևելի ռուս սլաւոնասէրին. Սամարինի վերոյիշեալ նամակը, որտեղ նա այն խորիմաստ միտքն է յայտնում թէ. «եկեղեցու մէջ ոչինչ երեւի՝ անսխալական չէ ինքն ըստ ինքեան (an sich) և ոչինչ անսխալական՝ եկեղեցու մէջ չի որոշւում երեւելի կերպով» — այսինքն ուղղափառ եկեղեցու մէջ ոչ մի արտաքին գնաչափ (կրիտերի) չկայ ճշ-

մարտութիւնը ճանաչելու համար. ճշմարտութիւնը աներեւոյթ է, իսկ երեւելին անսխալական չէ:

Կամ թէ Սուրբի խօսքերով պարզենք. Քանի որ չկան այն տեսակ արտաքին, անկարծելի նշաններ, որոնցով հնարաւոր լինէր ճշմարտութիւնը մոլորութիւնից որոշելը, ուստի՝ ինչպէս անհատը, այնպէս էլ ժողովուրդը՝ որ ձգտում է ճշմարտութեան, պարտաւոր է սեփական գործունէութեամբ, սեփական բարոյական ու մտաւոր աշխատանքով ձեռք բերելու և պաշտպանելու ճշմարտութիւնը, որն այս կերպով դառնում է կենդանի և արգասաւոր: Այս տեսակ ճշմարտութեան համար է ասած թէ՝ «ճանաչեցէք ճշմարտութիւնը և ճշմարտութիւնը կ'ազատէ ձեզ»: Այդ հոգեւոր պրօցէսում մարդը դադարում է բնութեան կրաւոր երեւոյթը լինելուց և դառնում է ինքնուրոյն գործոն, ուժ և իշխանութիւն է ստանում աշխարհի արտաքին տարրերի վրայ, որոնցից և կախած է նրա նիւթական բարեկեցութիւնը» (Մ. 446):

«Մարդկութեան յառաջագիւծութիւնը, շարունակում է նա. ուղղակի որոշում է նրանով, թէ արտաքին բնութիւնը որքան է ենթարկւում նրան. իսկ այդ ենթարկւելը կախած է մարդու ոգեկան ինքնագործութեան ուժից: Բնութիւնը չի կարող ենթարկւել մարդուն, եթէ մարդն ինքը ստրկաբար է վերաբերւում սոցիալական իրողութեան» (այսինքն՝ եկեղեցուն ու նրա ճշմարտութիւններին):

Ապա յայտնում է այն միտքը թէ «տնտեսական թշուառութիւնները հետեանքների կարգին են պատկանում». պատճառները շատ աւելի խորն են. նրա կարծիքով իսկական պատճառը ոգեկան անազատութիւնն է: «Մեր ժողովուրդի ներքին ոգեկան ուժերն ազատելու հետ՝ ամենայն ինչ յաւելցի մեզ. իսկ առանց առողջ կեանքի այդ առաջին պայմանն իրագործելու, բոլոր ձեռք առած արտաքին հնարները կարող են միայն դանդաղեցնել անկման ու լուծման անխուսափելի պրօցէսը» (Մ. 447):

Ինչպէս տեսնում ենք այս առաջին յօդւածից Սուր-

վեր թէ ուղղափառութեան և թէ իրական կեանքի պահանջների տեսակէտից անհրաժեշտ է համարում ոգեկան ազատութիւնը: Մարդու հոգին պէտք է ազատ լինի եկեղեցու ճշմարտութեանը անձամբ հասու լինելու. այդ աշխատանքը ուժ կտայ նրան իշխելու արտաքին բնութեան վրայ, ուրեմն և կարգաւորելու իր բարեկեցութիւնը: Բնութեան հետ յաջողութեամբ կուելու համար պէտք է ազատ ոգի ունենալ:

Բայց ում համար ազատութիւնը, մի որոշ խմբի թէ ամենքի համար: Այս հարցին նա որոշ պատասխան է տալիս իր երկրորդ յօդուածում:

(Շարունակելի).

Ի Լ Ի Ո Ւ Ս Կ Ա Ֆ Տ Ա Ն

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն եւ վերջ փետրուար 159—169 էջերի).

Յիշենք այժմ փիլիսոփայութեան այն կրկին ըմբռնումները, որոնց մասին վերեւ խօսք եղաւ, այն է՝ թէ փիլիսոփայութիւնն է կենդրոնական գիտութիւնը և կամ ուսումն գերագոյն բարեքի մասին: Մենք տեսանք, թէ ինչպէս այս երկու ըմբռնումները երկար ժամանակ տիրող մի կոմբինացիայի մեջոցով կապուած էին միմեանց հետ: Ապա մենք աշխատեցինք պարզել, որ այս միութեան պատճառ ու հիմք կազմող մտքերն արդէն ցոյց են տուել իրենց միայուն ու հաստատուն չլինելը: Եթէ այս այսպէս է, ապա հետեւութիւնն է. մի գուցէ այս ըմբռնումներէց ճիշդ է մի միայն մէկը — այն կամ այն. փիլիսոփայութիւնը կամ գոնէ տիրող հայեցակէտն է այն կամ այն, իսկ մերժուած հայեցակէտն արժանի է լոկ երկրորդական ուշա-